# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 139

## ԱՇՈՏ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Աշոտ Մեսրոպյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղում գործող ԱՁ Աշոտ Մեսրոպյանի հայտը, նրան տալ ծխախոտի և ոգելից, ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020թ. ապրիլի 01-ից 2020թ. հուլիսի 01-ը ընկած ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թ. 05 12
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 140

## ԳՈՀԱՐ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Գոհար Այվազյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղում գործող ԱՁ Գոհար Այվազյանի հայտը, նրան տալ ծխախոտի և ոգելից, ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020թ. ապրիլի 01-ից 2020թ. հուլիսի 01-ը ընկած ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2020 թ. 05 12
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 141

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԻ 06-057-0035-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Սանասարի Ղաբուզյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով,« Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածները՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0035-0014 ծածկագրում գտնվող 0.079 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝ Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0035-0014 ծածկագրի հողամասի մակերեսը 0.079 հա:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.079 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Սարգիս Սանասարի Ղաբուզյանի/ծնված 1951թ./, Օլգա Ռյաբովա Ալեքսանդրի/ծնված 1961թ/, Ռուսլան Ղաբուզյան Սարգսի/ծնված 1983թ/, Ռուստամ Ղաբուզյան Սարգսի/ծնված 1986թ/ և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. Ուժը կորցրած ճանաչել 11.07.2003 թ.-ին տրված թիվ 1816005 վկայականը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թ. 05 12
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ գ. Գյուլագարակ
Հեռախոս 025662167 , էլեկտրոնային փոստ gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2020 թվականի N 142

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՀԱՐՈՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 06-027-0074 -0018 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՈՒՆ-ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29- ի N 2387-Ն որոշմամբ և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22 կետով, **որոշում եմ.**

**ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի տարածքում գտնվող և սեփականության իրավունքով Ահարոն Վոլոդյայի Քալաշյանին պատկանող /06-027- 0074 - 0018/ ծածկագրով տուն-տնամերձին տրամադրել Կենտրոնական փողոց 2-րդ նրբանցք 1-ին փակուղի 1/2 հասցեն:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թ. 05 15
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 143

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետը, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղի 06-057-0015-0001 կադաստրային ծածկագրի 0.08 հա տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Կուրթան 7-րդ փողոց թիվ 26:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 05 15
գ.Գյուլագարակ